

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ 61-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի մայիսի 12—14 օրերին տեղի ունեցան ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի 61-րդ պատգամավորական ժողովն ու այլ համագումարներ՝ նախագահությամբ թեմի բարեխնամ առաջնորդ գերշ. Տ. Վաչե սրբազան. Հովսեփյանի:

Եկեղեցական համագումար

Հինգշաբթի, մայիսի 12-ին, հավաքվեց եկեղեցականաց տարեկան համագումարը՝ նախագահությամբ Վաչե սրբազանի և ատենապետությամբ հյուրընկալ՝ Փասադինայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ հոգշ. Տ. Մուշեղ վրդ. Թաշճյանի:

Օրակարգին անցնելուց ետաջ Մուշեղ վարդապետը ընթերցեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը՝ ուղղված թեմի եկեղեցական դասին.

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՎԱՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԲԱՐԵՋԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՔ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ

Ի Լոս Անճելըս

Տիրոջ ողորմությամբ ահա վերստին հավաքված եք, միասին քննարկելու համար անցնող տարվո ձեր հոգեշեն ու կրթանվեր աշխատանքը և գնահատելու ձեռքբերումները և նոր ծրագրեր մշակելու հառաջիկա տարվան համար:

Իրոք ձեր առջև բացված է գործունեության լայն ասպարեզ, հոգևոր և մշակութային կյանքի տարածքի վրա: Որով անհրաժեշտ է, որ դուք՝ բարեջան հոգևորականներդ, միշտ համախումբ թեմիդ սրբազան առաջնորդ հոր շուրջ, պահպանեք՝ ամուր ձեր լույս հավատքը, ձեր աշխատանքի անընկճելի եռանդը և լավատեսության ոգին, հաղթահարելու համար ամեն տեսակի դժվարություններ:

Ձեր թեմի, ինչպես նաև ամբողջ հայ սփյուռքի. հոգևոր և ազգային կյանքի գոյատևումը մեծապես պայմանավորված է մեր Եկեղեցիի առաքելությամբ և մեր հոգևոր սպասավորներու հոգեշունչ ու նվիրյալ աշխատանքով:

Մենք՝ ձեր Հայրապետը, Սուրբ Էջմիածնեն ճառագայթող Աստուծո օրհնությամբ. կմաղթենք, որ հավատարիմ ձեր սրբազան ուխտին, շարունակեք անսակարկ ձեր ավետարանական գործը հոգևոր կարգապահությամբ, սիրով միաբան մեկդ մյուսին զորավիգ ու քաջալիր:

«Հոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստէպ կացէք» (Հռոմ. ԺԲ 12): Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 մարտ 1988 թ.

Տիկնանց Միության համագումար

Ուրբաթ օրը, մայիսի 13-ին, տեղի ունեցավ Տիկնանց Միության 36-րդ համագումարը: Համագումարի աշխատանքներին մասնակցեցին թեմի բոլոր եկեղեցիների տիկնանց միությունները, ներկայացվեցին Կենտրոնական Խորհրդի և մասնաճյուղերի հաշվետվություններ:

Այստեղ նույնպես մեծ խանդավառությամբ ընդունվեց Վեհափառ Հայրապետի պատգամը.

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋՆՎԱՓԱՅԼ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Լոս Անճելըս

Հարգարժան Տիկնայք,

Մեր ժողովուրդի դարավոր պատմության ընթացքին, տիկնայք բազում անգամներ վկայություններ բերած են իրենց կրոնական հավատքին, իրենց բարոյական առաքինության և հայրենասիրական ոգիին:

Այսօր պատմության անցած են անցյալի բազում դժվարություններ ու ողբերգություններ, սակայն նաև մեր օրերուն հայ կանայք միշտ նույն հավատքով ու սուրբ զգացումներով պետք է արթուն մնան իրենց անփոխարինելի նպաստը բերելով մեր եկեղեցիներու պայծառության և նոր սերունդներու կրոնա-բարոյական դաստիարակության գործին:

Մենք որպես ձեր Հայրապետը, հուսով ենք որ դուք ազնվափայլ Տիկնայք ի սփյուռս աշխարհի, ձեր կարելին պիտի ընեք՝ շեն ու ծաղկյալ պահելու ձեր աղոթքի Տուները, ձեր դպրոցներն ու մշակույթի դահլիճները և ձեր ճիգն ու ջանքը կեդրոնացնելու ազգապահպանման նվիրական իտեալին վրա:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն ձեզի բոլորիդ կհղենք Մեր հայրապետական օրհնությունը, մաղթելով ձեզի արևշատ երկար տարիներ և ընտանեկան երջանկություն:

Օրհնյալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգվույն. ամեն:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 մարտ 1988 թ.

Թեմական պատգամավորական ժողով

ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի 61-րդ պատգամավորական ժողովը գումարվեց մայիսի 13-ի երեկոյան և մայիսի 14-ին, նույն՝ Փասադինայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Նախագահում էր գերշ. Տ. Վուչե սարքեպս. Հովսեփյանը, ատենապետն էր տիար Ճան Քեչոյանը:

Ժողովը բացվեց սրբազան հոր աղոթքով, ապա ընտրվեցին ժողովի ընթացքը վարող զանազան հանձնախմբեր:

Սրտի անհուն գոհունակությամբ ընդունվեց Վեհափառ Հայրապետի պատգամը.

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Լոս Անճելըս

Մեծահարգ պատգամավորներ,

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հայ ժողովուրդի հոգևոր տունն է, ուր շուրջ տասնյոթ երկար դարեր մեր ազգի զավակները աղոթած և հոգեկան սընունդ ստացած են: Մեր Եկեղեցին իր գոյությունը կշարունակե պահպանել ժողովրդավարական սկզբունքներով, ուր հոգևոր դասը և հավատացյալ ազգայիններ, ընտրված համայնքի ծոցեն, կղեկավարեն ազգային-եկեղեցական և մշակութային հաստատություններ, ի մխիթարություն և ի շահ հավատացյալ մեր ժողովուրդի հոգեվոր և բարոյական կյանքի ծաղկումին:

Ահա այս ոգիով է, որ կխորհինք, հավաքված եք դուք այսօր, իբրև պատգամավորները թեմական-եկեղեցական ձեր կազմակերպությանց, ձեր թեմական սրբազան առաջնորդի հոգևոր բարձր իշխանության ներքև, քննարկելու անցյալ տարվո ձեր թեմի և եկեղեցիներու գործունեության արդյունքները և մշակելու հառաջիկա տարվո ձեր աշխատանքներու ծրագիրները:

Հոգեկան մեծ հաճույքով կհաստատենք, թե որքան կարևոր ձեռնարկումներ կատարված են վերջին շրջանին ձեր թեմին մեջ՝ եկեղեցաշինության և դպրոցաշինության ասպարեզներու մեջ: Մենք անձամբ կվկայենք, որ զանոնք տեսանք ձեր թեմին մեջ, Մեր անցյալ աշնան այցելության ընթացքին:

Մխիթարված սրտով, Մենք ձեզի կմաղթենք աշխատանքի անսպառ կորով, ան-

նահանջ հավատք և պայծառ լավատեսություն ձեր ազգաշեն առաքելության ճանապարհին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ձեզի ամենուդ կբերենք Մեր սրտագին գնահատանքը և հայրական օրհնությունը:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13): Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 մարտ 1988 թ.

Ժողովը լսեց առաջնորդ սրբազան հոր տարեկան տեղեկագիրը, որ ընդգրկում էր թեմի 20 ծուխերի եկեղեցական և ազգային-մշակութային կյանքը:

Օրակարգին ներկայացվեց նաև արևմտյան թեմի առաջնորդի ընտրության հարցը: Ի բացակայության Վաչէ սրբազանի, տեղի ունեցավ ընտրություն՝ փակ քվեարկությամբ: Քվեարկող պատգամավորների 2-վելի քան երկու երրորդ ձայներով իր 17-ամյա ծառայության պաշտոնի մեջ վերընտրվեց գերշ. Տ. Վաչէ արքեպս. Հովսեփյանը: Ժողովականների համոզումն էր և ապառումը, որ սրբազան հայրը երիտասարդական ավյունով ու ջերմ եռանդով կշարունակի իր արդյունավետ գործունեությունը՝ ի փառս Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի պայծառ ապագայի:

ԹՂԹԱԿԻՑ